

Արձանագրություն N 2-11/17

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2017 թ.-ի նոյեմբերի 13-ի նիստի

Ներկա էին՝ Թորմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա. (գ.գ.թ.), Բաղունց Գ.Ռ., Ծատրյան Ա.Ա., Հակոբյան Ռ.Ս., Հակոբյան Շ.Հ., Շահբազյան Ա.Վ., Դավթյան Շ.Ա., Ավետիսյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ., Զաքարյան Գ.Է. (ուսանող), Կիրակոսյան Հ.Ա. (ուսանող), Ծատրյան Ս.Բ. (ուսանող), Գասպարյան Ի.Ա. (ուսանող):

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ), Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Ռ.Մ.:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի ԼՂ/ՆՆ-06/17 «Արցախի Հանրապետության տարածքում կառուցվող քառասուն խորքային հորերից սնուցվող ոռոգման համակարգերի շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման» պայմագրի շրջանակներում փորձաքննական աշխատանքներ պատվիրելու մասին:

2. ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության 2017թ.-ի նոյեմբերի 11-ի N15-5/4337 գրությամբ ներկայացվող խնդիրների լուծման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին:

3. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի դասախոսների կողմից հեղինակած աշխատանքների տպագրության մասին:

4.Այլ հարցեր:

Լսեցին 1 - «Հայաստան» համահայկական հիմնադրամի ԼՂ/ՆՆ-06/17 «Արցախի Հանրապետության տարածքում կառուցվող քառասուն խորքային հորերից սնուցվող ոռոգման համակարգերի շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման» պայմագրի շրջանակներում փորձաքննական աշխատանքներ պատվիրելու մասին հարցը:

Որոշեցին 1 - Լիազորել պրոռեկտոր՝ Պ.Գասպարյանին «Հայաստան» համահայկական հիմնադրամի ԼՂ/ՆՆ-06/17 «Արցախի Հանրապետության տարածքում կառուցվող քառասուն խորքային հորերից սնուցվող ոռոգման համակարգերի շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման» պայմագրի շրջանակներում թվով 37 օբյեկտների մասով նախագծի փորձաքննական աշխատանքներ կատարելու նպատակով ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան

ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտի հետ կնքել համապատասխան պայմանագիր՝ 1 հորը 64865 (վաթսունչորս հազար ութ հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Լսեցին 2- ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության 2017թ.-ի նոյեմբերի 11-ի N15-5/4337 գրությամբ ներկայացվող խնդիրների լուծման աշխատանքային խումբ ստեղծելու մասին:

Որոշեցին 2.1- ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության 2017թ.-ի նոյեմբերի 11-ի N15-5/4337 գրությամբ ներկայացվող խնդիրներին լուծում տալու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ ըստ հավելվածի (հավելված 1):

2.2- Հանձնարարել պրոռեկտոր՝ Պ.Գասպարյանին ապահովել 2.1 կետով նախատեսվող աշխատանքների կատարման համար անհրաժեշտ քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքումը:

Լսեցին 3 - Գիտխորհրդի քննարկմանը ներկայացվեց «Գյուղմեքենայացման և տրանսպորտային փոխադրումների» ամբիոնի դասախոսներ՝ Ա.Ս.Հակոբյանի և Վ.Ս.Հարությունյանի կողմից ներկայացված «Ճանապարհային երթևեկության կազմակերպում և անվտանգություն», «Հումանիտար և լեզուների» ամբիոնի դասախոս՝ Լ.Ժ.Շադինյանի «Հայոց լեզու» աշխատանքները:

Որոշեցին 3 - Դիմել ԼՂ ԿԳ և սպորտի նախարարությանը Շուշիի տեխնոլոգիական համալսարանի «Գյուղմեքենայացման և տրանսպորտային փոխադրումների» ամբիոնի դասախոսներ՝ Ա.Ս.Հակոբյանի և Վ.Ս.Հարությունյանի կողմից ներկայացված «Ճանապարհային երթևեկության կազմակերպում և անվտանգություն» աշխատանքը որպես լաբորատոր աշխատանքների համար մեթոդական ցուցումներ, «Հումանիտար և լեզուների» ամբիոնի դասախոս՝ Լ.Ժ.Շադինյանի «Հայոց լեզու» աշխատանքը որպես մեթոդական ուղեցույց տպագրելու համար:

Լսեցին 4 ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Շուշիի տեխնոլոգիական համալսարանին սերմեր և սածիլներ տրամադրելու մասին:

Որոշեցին 4- Թույլատրել ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ կնքել պայմանագիր մինչև 1(մեկ) մլն. ՀՀ դրամ արժողությամբ սերմեր և սածիլներ ձեռք բերելու նպատակով:

Նախագահ՝ ստորագրություն Հ.Վ.Թոքմաջյան
Քարտուղար՝ ստորագրություն Ա.Ա.Առաքելյան

ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության 2017թ.-ի նոյեմբերի 11-ի N15-5/4337 գրությամբ ներկայացվող խնդիրներին լուծում տալու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

Թորմաջյան Հովհաննես Վաչեի (նախագահ),
Սարգսյան Վիլիկ Հովհաննեսի,
Մարկոսյան Աշոտ Խաչատուրի,
Մելիքյան Ռազմիկ Հայրապետի,
Մարկոսյան Մհեր Վարդգեսի,
Գալստյան Արբակ Դերենիկի,
Հարությունյան Արեգ Կամոյի,
Միսակյան Էդգար Էդվարդի,
Առաքելյան Ալեքսանդր:

Նախագահ՝
Քարտուղար՝

Հ.Վ.Թորմաջյան
Ա.Ա.Առաքելյան

